

Ս. Յրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ

Շիրակօ, ԴԼԼ.

Տարեկան Տեղեկագիր Հոյիւին, 1971

Սիրելի ծխականներ

Փառք կուտանք Ամենակալ Աստուծոյ, որ մեզի ոյժ եւ կարողութիւն պարգեւեց որպէսզի ձեզ հետ ձեռք ձեռքի, տարի մը եւս բոլորենք ի պայծառութիւն մեր Ս.Եկեղեցւոյ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան:

1971-ի մեր եկեղեցական գործերը որպէս հովիւ եւ Ազգային գործերը որպէս համայնքային յարաբերութեան աշխատանքներ հետեւեալ կերպով դասաւորած ենք:

Ս.Պատարագ .- Ամէն կիրակի Ս.Պատարագ մատուցած ենք, ի բաց առեալ այն կիրակիներէն երբ բաղաբէն դուրս գտնուած եմ համաժողովներու առթիւ կամ արձակուրդով: Ս. Պատարագ մատուցած ենք նաեւ Հայկական ծնունդին, ժրագալոյցներուն եւ եկեղեցւոյ անուանակոչութեան օրը: Յուլիսի 11-ի կիրակին էյ.Սի.Վայ.Օի համագումարի առթիւ ֆիլատէլիոյ Ս.Երրորդութիւն եկեղեցին պատարագած եմ:

Մեծ Պահոց ընթացքին միայն Միջինքի օրը երեկոյեան Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւն ունեցած ենք, այն պատճառաւ որ շաբաթամէջերուն ոեւէ մէկը ներկա չէ եղած ժամապաշտութեանց, դժբախտաբար:

Քարոզախօսութիւնը եղած է երկու լեզուներով Հայերէն եւ անգլերէն, հասկնալի ըլլալու համար բոլոր ժողովուրդին:

Խորհրդակատարութիւններ ունեցած ենք ըստ հետեւեալին:

- Մկրտութիւններ 18
- Պսակօրհնութիւններ 6
- Թաղումներ 12
- 2 Թաղումներ ալ կատարած եմ էվընսթրենէն:
- Նշանօրհնութիւն 1
- Հիւանդաց Ծաղորդութիւն 4

Ալցելուլիւններ կատարած ենք մեր ծխականներուն ըստ պետս, աղօթած ու մխիթարած ենք զիրենք, մասնակից ըլլալով անոնց ուրախութեանց եւ տխրութեանց:

- 82 այցելութիւններ տուած ենք հիւանդաց տունները.
- 49 այցելութիւններ տուած ենք հիւանդաց հիւանդանոցները:
- 28 այցելութիւններ տուած ենք ցաւակցական մահերու առթիւ:
- 26 տունօրհնէք կատարած ենք միայն որովհետեւ փախաբողներուն թիւը պակասած է:
- 6 Գերեզմանօրհնէք:
- 265 հովուական այցելութիւններ զանազան առիթներով:

Ժողովներ եւ Համագումարներ: ներկայ եղած եմ Թեմական Պատգամաւորական եւ եկեղեցական տարեկան համագումարներուն ի Մոնթրէալ Գանատա, էյ.Սի.Վայ.Օյի 2⁵րդ տարեդարձի համագումարին ի ֆիլատէլիա, 6 Միտլէսթի ժողովներուն, 2 առաջնորդարանի կողմէ կազմակերպուած շրջանային ժողովներուն, որոնց հիւրընկալը եղանք:

4 Միջ-եկեղեցական Յանձնախումբի ժողովներուն, և Շիրակոյի Ընդունելութեան Յանձնախումբի ժողովներուն:

Մասնակցած եւ նախագահած եմ եկեղեցւոյս ծխական, վարչական եւ յանձնախմբային բոլոր ժողովներուն եւ հսկած ու ուղղութիւն տուած որ անոնց գործերը կատարուին ըստ Հայց. Եկեղեցւոյ սահմանադրութեան եւ կանոններուն:

Ձեռնարկներ Պատշաճ հանդիսաւորութեամբ տօնած ենք, նահատակաց Յիշատակահանդէսը, Գարեգին Կաթ. Յովսէփեանցի Յորելեանը, Եկեղեցւոյ Օժման Տարեդարձը: ճոխ ընդունելութիւն սարքած ենք եկեղեցւոյ սրահին մէջ, հայրենի մեր արուեստագէտներուն համար:

Ներկայ եղած եւ աւուր պատշաճի մասնակցութիւնս բերած եմ համայնքային եւ ազգային զանազան ձեռնարկներու եւ հաւաքոյթներու առանց խտրութեան: Ասոնց վրայ կարելի է աւելցնել Մկրտութեանց եւ ամուսնութեանց առթիւ ընդունելութեանց եւ մահերու առթիւ հոգեժաշերու մասնակցութիւնս սեղանօրհնութեան համար:

Այգելու Եկեղեցականներ

- Հայր Վարուժան Ժ.Վրդ. Գապարածեան
- Հայր Վազգէն Վրդ. Թաթոյեան
- Հայր Վազգէն Վրդ. Քէշիշեան
- Տէր Բարի Քհնյ. Մեթճեան
- Տէր Ներսէս Քհնյ. Պապուրեան

Էջմիածին Այգելութիւն Անակնկալ բայց բարի նպատակով ես եւ Երեցկինը պէտք եղաւ որ Պէյրութ ճամբորդէինք: Վեց օր ալ Հայաստան այցելեցինք. այս առթիւ ամբողջ Յիրակի օր մը Վեհափառ Հայրապետի հիւրը եղանք էջմիածնայ մէջ:

Եկեղեցւոյ Կազմակերպութիւնները` Երեց Տիկնաց Միութիւնը, Երիտասարդ Տիկնաց Միութիւնը, Դպրաց Դասը, Կիրակնօրեայ Դպրոցը, Երիտասարդաց Կազմակերպութիւնը եւ այս բոլորին վրայ հսկող եւ հովանաւորող ծխական խորհուրդը, շատ գնահատելի աշխատանք կը տանին ու նուիրուած գործ կը կատարեն եկեղեցիէն ներս ու շուրջը: Իրենց տարեկան տեղեկագրերը կը վկայեն այդ մասին:

Գրասենեակի Գործերը կը կատարենք կանոնաւորաբար: Նամակագրութիւններ, արժանագրութիւններ, թղթակցութիւններ եւ յայտարարութիւններ կատարուած են ժամանակին եւ մասնաւոր առմարներու մէջ ամփոփուած:

Լուսաւորել-թերթիկը կը շարունակենք հրատարակել թերթիկը երկու լեզուներով. թէեւ կանոնաւորաբար ամէն ամիս լոյս չենք կրնար ընծայել, որովհետեւ պէտք եղած օժանդակութիւնը չենք ստանար ժամանակին: Սիրոյ եւ նուիրումի գործ է, կը յուսանք օր մը դարձեալ կը կանոնաւորուի:

Եկեղեցւոյ Բարեգաւղման աշխատանքը չենք դադրեցուցած: Արդէն ``Վերջին Ընթրիքը`` քանդակը գետեղուած է Ս.Սեղանին առջեւի մասին վրայ: Երեք քիւրեղեայ ջահեր գետեղուած են եկեղեցւոյ մէջ եւ միւս լոյսերուն տեղն ալ ջահեր պիտի դրուին շուտով: Նուիրատուները պատրաստ են:

Թեւադրութիւններ

- Նկատելով որ եկեղեցին նիւթական ինքնարաւ վիճակի մէջ է, կ'առաջարկեմ որ,
- 1.- Հանդիսասրահը օժտուի նոր բեմով մը եւ սրահը բարեգարդուի, որպէսզի կարենանք սրահը օգտագործել մշակութային ձեռնարկներու համար:
 - 2.- Որպէսզի մեր երիտասարդութիւնը կարենանք հետքերքել եկեղեցիով եւ կարենանք զանոնք եկեղեցիին մէջ պահել, մեծ սրահին մէջ յարմարութիւններ ստեղծել սպորտային խողերու համար:
 - 3.- Կազմել մշակութային Յանձնախումբ մը որուն պարտականութիւնը ըլլայ, ազգային տօներու առթիւ կազմակերպել պատշաճ յայտագիրներ եւ գործադրել: Նաեւ յետամուտ ըլլալ ու մշակութային զանազան ձեռնարկներ ներկայացնել Շիրակոյի Հայ հասարակութեան համար:
 - 4.- 1972-ի տարին հռչակել անդամարշաւի տարի: Յանձնախումբ կազմել եւ այցելել ըզլոր անոնց որոնք այս համայնքին կը պատկանին սակայն միշտ եկեղեցիէն ու ձեռնարկներէն բացակայ են:

Վերջացնելէ առաջ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ծխական Խորհուրդի անդամոց, եկեղեցապատկան կազմակերպութեանց անդամներուն, վարչականներուն, սարկալազներուն, դպիր-դպրուհիներուն, Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմին, թերթին օգնողներուն եւ ըզլոր ազնիւ ու բարպաշտ անձերուն որոնք, փոխանակ միայն քննադատելու, բարոյապէս ու նիւթապէս օգնեցին մեզի եկեղեցւոյ գործերուն բարւօք կատարման, անոր պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Օրհնեալ ըլլաք. ``Բարիին յետամուտ եղէք միշտ``:

Սարգիս Քհնյ. Գաշըզմեան
 Յունուար 2, 1972
 Շիրակօ, Իլլ.